ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 2024-2026թթ. աշխատանքների» ծրագրի հանրային քննարկում

ՀՀ Սյունիքի Մարզ, Մեղրի համայնք, գ. Լիճք
29.03.2024թ.

2024թվականի մարտի 29-ին՝ 17:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 2024-2026թթ. աշխատանքների» ծրագրի հանրային քննարկում:

Քննարկումը վարում էր Մեղրի համայնքի ղեկավար Բ. Զաքարյանը, ներկա էին համայնքի ղեկավարի տեղակալ Խ.Անդրեասյանը, Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Հ. Հովհաննիսյանը, «Պրո Կոնստրակտ» ՍՊԸ (Նախաձեռնող) տնօրեն Ն. Գևորգյանը, երկրաբան Մ. Հարությունյանը և համայնքի բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը: Նա նշեց, որ ի պատասխան Նախաձեռնողի տնօրենի հանրային քննարկման կազմակերպման հայտի՝ օրենքով սահմանված կարգով, համապատասխան փաստաթղթերը հրապարակվել են տարբեր էլ. Հարթակներում, փակցվել են նախատեսված վայրերում, համայնքի գյուղական բնակավայրերի վարչական շենքերում, Ագարակ և Մեղրի քաղաքներում:

Այնուհետև Բագրատ Զաքարյանը խոսքը փոխանցեց Նախաձեռնողի տնօրեն Ն. Գևորգյանին: Գևորգյանը հանդես եկավ ողջույնի խոսքով, շնորհակալություն հայտնեց ներկաներին և ներկայացրեց ծրագրով նախատեսվող աշխատանքների հիմնական բնութագրերը:

Նա նշեց, որ հանքը գործել է մինչև 2012թ., իսկ վերջին գնահատումը կատարվել է 2003թ.-ին, սակայն էլ. բազայում չկա պահպանված որևէ տվյալ, ուստի անհրաժեշտություն է առաջանում թարմացնել տվյալները, կատարելու փորձնական հանույթ, հասկանալու համար հետագայում հանքը տնտեսապես ձեռնտու է լինելու, թե՝ ոչ:

Հարությունյանը, նշեց, որ ռիսկային ներդրում է արվելու, քանզի աշխատանքներ պետք է կատարվեն վերագնահատման նպատակով, այնուհետև պարզ կլինի արդյունավետությունը՝ հաշվի առնելով ոսկու շուկայական գնի տատանումները: Շարունակելով՝ Հարությունյանն ասաց, որ Նախաձեռնողը պատրաստ է համագործակցել համայնքի ղեկավարության հետ, կատարել սոցիալական ներդրումներ խոշորացված համայնքում, ինչպես նաև՝ հնարավորության սահմաններում լուծել մի շարք համայնքային խնդիրներ:

Այնուհետև սկսվեց հարցուպատասխան

Արշավիր Հայրապետյանը (մասնակից) հարցրեց, թե որտեղ է գտնվելու հանքահորը:

Բագրատ Զաքարյանը շեշտեց, որ և՛ Կառավարությունը, և՛ համայնքը կտրականապես դեմ են բաց հանքերի շահագործմանը, այդ պատճառով հանքը գործելու է փակ:

Մանվել Հարությունյանը նշեց, որ հետագա կատարվելիք աշխատանքները ստորգետնյա եղանակով են ընթանալու, ծրագրով չեն նախատեսվում պոչամբարների կառուցում:

Մասնակիցներից Սարգիս Սարգսյանին հետաքրքեց դատարկ ապարների(отвал) հարցը, թե մշակումից հետո որտեղ են լցվելու դրանք:

Ի պատասխան Մանվել Հարությունյանը տեղեկացրեց, որ նրանք ճիշտ մոտեցում են ցուցաբերելու դատարկ ապարներին, աշխատելու են ստորգետնյա փլվածքներով, վերընթացների, վարընթացների միջոցով: Իսկ հետագայում օրենքով սահմանված կարգով տեղ կհատկացվի լեռնահատկացում (горный отвод): Ստանալով թույլտվություն Կառավարությունից՝ դատարկ ապարների համար այլընտրանքային լուծումներ են առաջարկվելու, օրինակ՝ կոպիճի կամ այլ շինանյութի ստացում:

Ավագանու անդամ Արարատ Թումանյանը հարցրեց.

1. – Որքա՞ն կտևի հետախուզական աշխատանքը
2. – Որտե՞ղ է իրացվելու պատրաստի պրոդուկտը, ներքին թե արտաքին/միջազգային շուկայում:

Հարցին պատասխանեց Նարեկ Գևորգյանը.

-Եթե հարցին նայենք բիզնես տեսանկյունից, հաշվի առնելով շուկայում գինն ու մնացած հարաբերակցությունները, ապա տնտեսապես ավելի շահավետ շուկայում կսպառենք,- հավելելով,- Հայաստանյան շուկան խիստ սահմանափակ է:

Ա. Թումանյանը հարցրեց, թե արդյոք արտաքին շուկա դուրս գալու դեպքում խոչընդոտներ չե՞ն լինի, ինչին Նարեկ Գևորգյանը բացասական պատասխան տվեց:

Վերագնահատման աշխատանքների մասով նշեց, որ ընթանալու են 2024-2026թթ.:

Գյուղի բնակիչներից Խաչիկ Ալեքսանյանը ողջունեց հետագա հանքի շահագործումը, առաջարկելով օգտակար լինել գյուղական բնակավայրերին:

Վերջում Մանվել Հարությունյանը, ամբողջացնելով ինֆորմացիան, նշեց, որ բացառվելու են պոչամբարները/խվոստները: Սկզբնական նպատակը տվյալների թվայնացումն է, նաև պարզելը, թե արդյոք հավաստի են եղել ժամանակին կատարված նմուշները և նոր տեխնոլոգիաների պայմաններում կատարվող անալիզների արդյունքները:

Ավարտելով լսումը՝ Բագրատ Զաքարյանը նշեց, որ հանքարդյունաբերությունը պետության ֆինանսական հենասյուններից մեկն է և շատ կարևոր՝ հզորանալու համար:

Տեղեկացրեց, որ դեռ լինելու են հանրային լսումներ մասնագետների հետ՝ վերոնշյալ թեմայով:

Շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցելու և ժամանակ հատկացնելու համար:

Ընդունելով, որ մասնակիցները տալիս են իրենց դրական կարծիքը՝ հանրային լսումը համարվեց փակված:

Հանրային քննարկումների պատասխանատու,

Մեղրի համայնքի ղեկավար՝ Բ. Զաքարյան

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝ Ն.Գևորգյան